ՎԱՐՊԵՏԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Քանդակագործ Ալիս Մելիքյանին հանդիպեցի օրերս Երեւանում: Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանում կազմակերպվել էր հանդիսություն՝ նվիրված քանդակագործի ծննդյան 75-ամյակին: Հրավիրատոմսի վրա Վարպետի բարեմաղթանքի խոսքն է՝ գրված 1955թ. հոկտեմբերին. «Շատ սիրելի Ալիսին՝ շնորհալի քանդակագործին, սրտիս ջերմությամբ մաղթում եմ երջանիկ, բախտավոր կյանք եւ արվեստի անթառամ հաղթանակներ»:

Տասնամյակներ անց նույն ջերմությունը քանդակագործի հանդեպ ցուցաբերեց Վարպետի թոռը՝ գրականագետ Ավիկ Իսահակյանը, որ մտավորականին վայել կեցվածքով ամեն ջանք գործադրեց, որպեսզի միջոցառումը ներկայանա մշակութային արժեքների հանդեպ տուն-թանգարանի որդեգրած ավանդույթների շրջանակում: Այսպես է ապրում թանգարանը, որի հյուրընկալ հարկի տակ մտավորականները, արվեստագետները իրենց զգում են հարազատ միջավայրում: Այսպես է եղել եւ Վարպետի ողջության տարիներին: Ալիս Մելքոնյանը իր քանդակներով, ցուցադրած սլայդներով, աշխատանքների լուսանկարներով ներկայացնում էր մշակույթի նվիրյալների մի մեծ աստղաբույլ: Կնոջ նուրբ հոգով նա կարողացել էր թափանցել այդ մարդկանց ներաշխարհը, ճանաչել նրանց եւ այդ ամենը փոխանցել անկենդան նյութին: Աշխատում է իրեն հատուկ ժրաջանությամբ, արագ-արագ ու մեծագույն հաճույքով: Աշխատանքներն ավարտելուց հետո հաճախ մոռանում է նշել *իր անունը: Տուն-թանգարանի բակում* Վարպետի կիսանդրին է՝ քանդակագործ Կոլյա Նիկողոսյանի աշխատանքը: Այս արձանի մոտ սիրում են լուսանկարվել Վարպետի արվեստի երկրպագուները: Երկրորդ հարկում տեղադրված քանդակի հեղինակը Ալիս Մելիքյանն է: Նա է կերտել նաեւ Իսահակյանի տիկնոջ՝ Սոֆիի դիմաքանդակը, այնքան նման, որ բանաստեղծը կատակով ասել է. «Մի Սոֆին բավական չէր, հիմա էլ՝ մյուսը...»:

Ալիս Մելիքյանի աշխատանքների թվում հայտնի են մշակութային տարբեր օջախներում տեղադրված մեր արվեստագետների դիմաքանդակները՝ Միքայել Թավրիզյան, Օլգա Գուլազյան, Լեւոն Քալանթար, Արմենակ Շահմուրադյան: Ուշագրավ մի պատմություն է կապված Հովհաննես Շիրազին քանդակելու հետ: Շիրազը նեղսրտել է անշարժ նստելուց, աշխատանքը Ալիսը ավարտել է հիշողությամբ: Այն դուր է եկել բանաստեղծին. «Հրբը օր կըսեի առանց ինձ քանդակի՞...»: Սա տեղի է ունեցել 1959թ.: Քանդակը մնացել է Ալիսի Երեւանյան արվեստանոցում, եւ այժմ հայտնի չէ նրա տեղը: Այս ցուցահանդեսում կարելի է տեսնել քանդակի մեծադիր լուսանկարը: Շատերին է ծանոթ Շառլ Ազնավուրի դիմաքանդակը, որն Ալիսը կերտել է ընդամենը քսան րոպեում: Ցանկը կարելի է շարունակել՝ Օհան Դուրյան, Գոհար Գասպարյան, Ֆրունզիկ Մկրտչյան, երգիչ-երգչուհիներ, բեմի նվիրյալներ, գրողներ՝ հայ եւ օտարազգի: Ցավով է հիշում Դսեղից ոչ հեռու ժայռի վրա փորագրված Հովհաննես Թումանյանի անավարտ